№ 29 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 12 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 12 № 29

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարեանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Ընտանեկան տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարեանը 5 ֆր. կամ 2 բուրլի։

Ընտանեկանից փողի համար պիտի գիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Эриванскій Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Երատասանման յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մոռացած հարցեր.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ռաշտի խնդիրը. Մի կեղտոտ դաւ. Նամակ Ռաշտից. Նամակ Խմբագրութեան. Մասնախօսութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.

ՄՈՌԱՑԻԱԾ ՀԱՐՑԵՐ

—

II

Սկսենք մեր խօսքը դպրոցական հասոյթների մասին՝ ամենատարրական կէտից։

Ուզում, որպէս և ամեն տեղ, չը պէտք է ձրի տալ և վարժ ցնել հասարակութիւնը ձրիակերութեան, այլ վճարումով և այն էլ պարտաւորեցուցիչ։ Ինչպէս առաջ ասել ենք, էլի կրկնում ենք, որ ծնողներն եթէ պարտաւորութիւն են զգում ապրեցնել իրանց զաւակներին հայթայթելով նրանց համար կերակուր հագուստ և այլ պիտոյքներ, կրկնակի պարտաւորութիւն պիտի զգան հոգալ նրանց մտաւորականի զարգացման պիտոյքները. բայց վճարելով և ոչ թէ մուրալով։ Բացառութիւն համարել միմիայն թէհրանցիներին—կը լիներ անտրամաբանական։ Մեր այժմեան դրութեան մէջ հոգաբարձութիւնը մուրում է հասարակութիւնից մէկ քանի կոպէկներ, հասարակութիւնն էլ իւր հերթին մուրում է նրանից իւր զաւակների ձրի կրթութիւնը և ուսումը. այդ իսկ պատճառով ոչ հոգաբարձութիւնը կարողանում է հասնել իւր նպատակին և ոչ էլ հասարակութեան զաւակներն են կրթվում, ուսում ստանում։

Ուրեմն ինչպէս պէտք է կառավարուեն մեր դպրոցները, քանի որ երկու կողմերն էլ միմեանցից պահանջում են և ոչ մէկը չէ ստանում։

Պէտք է դպրոցների մուտքը դարձնել թոշակաւոր. հասարակութիւնից ընտրուած հոգաբարձութիւնը թող որոշէ ամեն մի աշակերտի վճարելիքը և պահանջէ նրա ծնողից ամսական մի որոշ տուրք (ոչ պակաս քան 5 ղրան)։

Այդպէս. եթէ Հայկազեան երկսեռ վարժարանների աշակերտաց ամենապակաս թիւը հաշուենք 70, կունենանք (եթէ հոգաբարձութիւնը չուզէ բարձրացնել թոշակը, այլ սկզբունքով ընդունել նրա ներմուծումը դպրոցում) 420 թուման տարեկան մի գումար, որին աւելացնելով նաև տէրութեան 200 թուման ռոճիկը, այլ և զանազան օժանդակող արտաքին արդիւնքներ որպիսիք են—ներկայացումներ, երեկոյթներ մինչև իսկ կամաւոր նուէրներ—հոգաբարձութիւնը կունենայ ամենաքիչը 700 թուման մի արդիւնք։

Ուրեմն եթէ հոգաբարձութիւնը ձեռք առնէ—որ և արդէն պարտաւոր է—այս առաջին ամենագործնական միջոցը, կարծում ենք, որ խաղաղ կերպով կարող է բանալ դպրոցների դուռը և վստահ լինել որ տուածի փոխարէն ստանալու է։

Բայց գուցէ առարկեն—ինչպէս շատ անգամներ արդէն լսել ենք—թէ հասարակութիւնը տրամադիր չէ ուսման համար տուրք վճարել և թէ տարբեր միջոցներով պէտք է առնել նրանից։ Այդ բոլորովին սխալ է։

Տեարակում ստորագրելու սիստեմով հասարակութիւնը չէ վճարում. մէկը ստորագրում է դիցուք 7 թուման և երեք զաւակ ուղարկում դպրոց. մի քանի տարիներ զաւակները յաճախում են դպրոց, սակայն ոչ մէկ անգամ վճարում այդ 7 թումանը։ Իսկ եթէ թոշակը չը կամենալ վճարել, այդպիսի հանգամանքնե՞ն ամենաաւելի լաւ է դպրոց չունենալ, ունեցածն էլ փակել, քան թէ հոգաբարձութիւնը հասարակութիւնից և այս կերպի՞ ս առաջինից մուրա՞ և ոչինչ չը ստանա՞ն։

Մեր այս առաջարկը այնքան տրամական մի առաջարկ է, որ ի վայ կանգ առնել երկար աւելորդ կը լինէ։ Մենք մտածում ենք որ հէնց այս տարուանից սկսած հոգաբարձութիւնը պիտի ձեռնարկէ թոշակի սիստեմը։

Իսկ մենք մի ցոյց տուած գումարից յետոյ, բիւդջէի բաց մնացածի համար կը ցոյց տանք կողմնական անգամ, եկեղեցական կալուածներից և այլ շարժական ստացուածքից ստացուող ուրիշ այնպիսի արդիւնքներ, որոնք կամ կորսվում են աննպատակ և կամ կլանվում և որոնք աւելացնելով թոշակներից կազմուած գումարի վրայ, կը դոյացնեն դպրոցը պահպանող մի մշտական գումար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱՇՏԻ ԽՆԴԻՐԸ

—

«Շաւիղ» № № 20 և 21 համարներուս մեր մի թղթակիցն ու գլխաւոր աշխատակիցը խօսելով այ՝ տեղի տիրացու ուսուցչի մասին, յայտնել են այն փաստը որ «դրացիները պատմում են թէ ուսուցիչն ու ուսուցչուհին օրի և գինը են բերել տալիս և օր. դպրոցում պարբեր են սարքում, իսկ ուսուցչի ունեցած պարսիկ աշակերտները հանդիսատես են այդ զարմանքեան»։ Ի միջի այլ փաստերի, որոնց իսկութիւնը ոչ ոք չէ հերքում, այս փաստն է, որին նոյն քաղաքի ուսուցիչը խեղաթիւրելով, օգտուելով ժողովրդի դիւրահաւատութիւնից, զրգռել է նրանց մեր թերթի դէմ, հաւատացնելով որ իբր թէ մեր թերթը կամենում է դպչել աշակերտուհիների պատուին հայլն։ Ուսուցչի այդ անազնիւ վարմունքը, որի տակ կամեցել է իր կեղտերը դիմակաւորել, սկզբում ահագին յուզում է ձգել Ռաշտի ժողովրդի մէջ. մեր մէջ կարդացող և հասկացողներ, մանաւանդ ամբոխի մէջ քիչ են. մի խորամանկ մարդ կարող է նրանց գլխիցը բռնել և այս ու այն զրուածքի միտքը բոլորովին այլ կերպ մեկնաբանելով, սխալ ուղղութեան վրայ դ ել ժողովրդին։ Փորձեր ունինք որ նոյնին մտքեր. լիովին հակառակ հասկացողութիւն են հանել այնպիսի գրուածքներից, որոնք միմիայն անմեղութիւն կամ պարզ մտքեր են բովանդակել. բայց, օգտուելով ժողովրդի միամտութիւնից և իր կեղտերը թագցնել կամենալով մտ ել հասարակութեան պատիւը պաշտպանողի դերի մէջ՝ տնում են միայն բարոյապէս փչացած անձնաւորութիւններ։

Այդպէս էլ կատարել է Ռաշտում։ Այդտեղի ուսուցիչը, կամենալով իր կեղտերը ծածկել և ժողովրդի ուշադրութիւնը վրիպեցնել, խեղաթիւրել է մեր գլխաւոր աշխատակցի տուած տեղեկութիւնները, ստանձնել է հասարակութեան և կամ անմեղ աղջիկների պաշտպանի տարտիւֆական դերը և գրգռել դիւրահաւան ամբոխին, մինչև իսկ ստորագրութիւններ կազմել։ Բայց միթէ փորձերը չենն ցոյց տուել թէ որ աստիճան հեշտ է—մանաւանդ մեզնում—կորզել ստորագրութիւններ նոյն իսկ ամենակներև ստեր պաշտպանելու համար։ Ո՞վ չէ տեսել այդպիսի շատ դէպքեր. դեռ երէկ էր որ Սալմաստի ենիչերական խումբը—Արսէն վ. Վեհունին, թեմական տեսուչը և այլն—հարիւրաւոր ստորագրութիւններով թղթեր ներկայացրին, ուր տուած է որ նրանք իդէական ազնուութեան տէր անձինք են և այլն։ Ամբոխի քթիցը բռնելուց դիւրին ոչինչ չը կայ. մի քանի փքուն—«ազգասիրական» ֆրազներ, քիչ բարձր ձայն, մի քիչ էլ անգիր արած «պատիւ», «դասական» օգուտ» բառերը կարող են ստորագրութիւններ կուտակել։ Բացի դրանից, եթէ ստորագրութիւն ժողովողը ունի մի «աղա» պաշտպան, որից տնտեսապէս կախում ունին ամբոխից շատերը—այ՝ ժամանակ «աղայի» միակնարկը հարիւրաւոր ստորագրութիւններ կարող է հաւաքել. մանաւանդ մի այնպիսի դրութեան մէջ, երբ փողատէր աղան ներկայանում է որպէս տէր և իշխան բոլոր իրենից կախումն ունեցողների։

Յաճախ մարդ ապշում է երբ յանկարծ տեսնում է որ ակներև, տնիրաւու կեղտոտ անձի պաշտպանելու համար՝ հարիւրաւոր ստորագրութիւններ են հաւաքւել. բայց ամբոխի հոգեբանութիւնը, տնտեսական հանգամանքներն ու այլ դրութիւնները՝ պարզում են այդ ցաւալի երևոյթի պատճառը։ Եւ ահա մի որ և իցէ անպատկառ ու մեծ ճանապարհի աւազակապետ «աղա», որպիսին է Ռաշտի Աստուածատուր Տէր-Օհանեանը, տարիներից ի վեր տնտեսապէս և այլ միջոցներով իրեն ստրուկ դարձրած ամբոխի՝ քթիցն է բռնում և իր համար մեղրալից կեղծութեամբ թել պատրաստող վարժուհուն, իր մեծութիւնն դրատող, կեղտերից բարձրութեան գահ կառուցանող ուսուցչին պաշտպանելու համար՝ ստորագրութիւն է ժողովում, կրթութեան գործը իր կեղտոտ ինստինկտների գործադրութեան գործիք դարձնում։ Թափվում են մեր սեղանի վրայ հանրագրութիւններ, որոնց տակը ստորագրել են նոյն իսկ ինտելիգենդ—հասկացող անձինք կամ վախենալով և կամ ով գիտէ ինչպիսի հանգամանքներից ճնշուած։

Կանգ չենք առնում երկար, ապացուցանելու համար թէ այդ հանրագրութիւն ստորագրողներից շատերը ինչպէս մեզ առանձնապէս գրել են, որ իրենք ստորագրել են վախենալուց, որ իրենց ստիպել են, սպառնացել են։ Չենք ուզում դեռ թէ՝ որպիսի՞ կեղծութեամբ են հաւաքւել այդ ստորագրութիւնները և այլն և այլն։

Մեր գլխաւոր աշխատակիցն էլ այս անգամ, Ռաշտից անցնելիս ենթարկուել է նոյն իսկ մի աւազակային յափշտակութեան Աստուածատուր Տէր Օհանեան աղայի կողմից։ 15 զինուած պարսիկներ յարձակուել են մեծ ճանապարհից անցնող մեր աշխատակցի վրայ, յափշտակել նրան, տարել են Աստուածատուր Տէր Օհանեանցի մօտ, նախօրօք կողոպտելուց և վիրաւորանքներ հասցնելուց յետոյ։ Այնտեղ Տէր Օհանեանը զանազան

շողոքորթական սպառնալիքներ է կարդացել մեր Հասցէին, ճգնել է մեր գլխ. աշխատակցից ստորագրութիւն առնել ևայլն ևայլն և մեր աշխատակիցը խոստացել է որ կը խնդրի խմբագրութեանն՝ տպագրելու ուղարկուած հերքումը կամ նրա բովանդակութիւնը:

Ի՞նչ տպենք. տպենք որ այդ հերքումը մի տնմիտ բան է և աշխատում է հերքել միայն մի կէտը: Ենթադրենք պահ մի որ այդ կէտը սուտ է. իսկ միւսները. չէ՞ որ միւսները բաւական են արատաւորելու այն ուսուցչին ու ուսուցչուհուն, որոնք քծնելով և շողոքորթելով վաստակել են Տէր Օհանեանցի պէս զզուելի վայրենիների պաշտպանութիւնը և անպատիժ կերպով իրենց գծուծ շահերին են ծառայեցնում ազնիւ սկզբունքները, օգտուելով ժողովրդի բարեսրտութիւնից: Բայց մենք այս համարումն իսկ տպագրում ենք մի նանակ ոչ կրում է ստորագրութիւն և որ քաջութիւն ունի հաստատել մեր գլխաւոր աշխատակցի № 21-ում գրածները: Ռաշտից մեզ եկած հոգաբարձական մի յանդուգն նամակ պահանջում էր իմանալ թէ ով էր այն, որ մեր աշխատակցին հաղորդել էր ամէն ինչ:

Այդ պարոնը ահա այժմ գրում է իր բուն ստորագրութեամբ:

Այդպիսով հարցը մտնում է իր պարզ դրութեան մէջ, ամբաստանողը երևանում է գալիս, փաստեր է մէջ բերում և հաստատում բոլոր մեր ասածները,

Մենք այդպիսով վերջացնում ենք Ռաշտի ուսուցչի, ուսուցչուհու և այնտեղ իրենց գծուծ գործունէութեամբը յայտնի փտած Ծատուրների և Աղաւէլների հետ մեր գործը: Մենք ցաւում ենք միայն որ ռաշտեցիք հանդուրժում են այնքան երկար կրել այդ աղաներից ստացած ստրկական օղերը, ոչխարների պէս կատարել այդ աղաների կամքը և դեռ շարունակում են իրենց մանուկների կրթութեան գործը թողնել մի ապիկար ուսուցչի և մի լիովին տգէտ վարժուհու ձեռքը: Մենք ասել ենք որ չենք վախենալ տրորելու ստութիւնն ու կեղծութիւնը, ոտնատակ տալու ստորութիւնն ու քծնութիւնը:

Այդպէս էլ անում ենք և անելու ենք, չը նայելով որ Ծատուրների պէս աւազակներ նախատում են մեր աշխատակիցներին և կամ յաջողվում են սպառնալիքներով ստորագրութիւններ կորզել միամիտ ժողովրդից: Մենք միշտ մեր դրօշի տակն ենք և կանգուն. եթէ ընկնենք իսկ, կընկնենք քաջաբար, մեզ վախեցնել չեն կարող ոչ Ծատուրներ, ոչ Աղաւէլներ և ոչ էլ նրանց բռնութեան տակ հաւաքուած անմիտ հանրագրութիւններ:

Ռաշտի խնդիրը պարզուեց. ուսուցիչն ու ուսուցչուհին համարվում են այսուհետև ընդ միշտ խարանուած, Ծատուրը որպէս նրանց անամօթ պաշտպանը և Ռաշտի դպրոցը որպէս զոհ այդ շայկայի:

Ռաշտի ժողովուրդին է մնում ուշքի գալ և ցնցել իրենից այդ զզուելի ցեցերին, վռնտել իր միջից այդ տիրացուներին և իրենց տնտեսական ոյժը, ուսումնասէր ոգին հարստահարելու չը թողնել զանազան բաղդախնդիրների կամ իրը գործիք դարձնել զանազան Ծատուրների կրքերի:

Հ. Խ.

ՄԻ ԿԵՂՏՈՏ ԴԱՒԻ

«Շաւիղ» № 16-ում տպել ենք Սալմաստից մեզ ուղարկած մի յօդուած, որ կրում է «Սալմաստի տեսչի վանդալականութիւնը» վերնագիրը: Այդ յօդուածում նկարագրած է Սալմաստի տեսչի մի քանի վայրենութիւնները: Այդպիսի վայրենութիւններ թէև անսպասելի չեն Մ. Աւետիսեանից, սակայն այդ յօդուածում հաղորդուած փաստերը ԼԻՈՎԻՆ ՍՈՒՏ ԵՆ և դիտմամբ հնարուած:

Մեզ ուղարկած թղթակցութիւնը կրում էր մի անուն և մի ազգանուն, այն է Ղազար Մելիքեանց, որ խնդրել էր «եռատող» դնել իր զրուածքի տակ: Մենք տպեցինք նամակը, որովհետև պատմած դէպքերը հաւանական էին թուում. Մ. Աւետիսեանից դեռ դրանից վատերն էինք սպասում: Բայց դրանից, մենք չենք կարող ճանաչել ամէն մի գրող թղթակցին անձամբ: Ուղարկուած յօդուածը կրում էր արժանահաւատ կերպարանք:

Յօդուածը տպեց: Եւ ահա մեր բարեկամներից մէկը հեռագրով հաղորդեց մեզ, որ յօդուածի փաստերը լիովին սուտ են, և «որ յօդուածը մի սրիկայական խաղ է «Շաւիղի» պատուի հետ, որ խաղացել են չորախնդաց մարդիկ», Այնուհետև ստացանք նամակներ, որոնք պնդում էին այդ:

«Այդ խորամանկ մարդիկ—գրում է մեզ մեր բարեկամը— իրենց հրէշային երևակայութեան մէջ ստեղծել են փաստեր և շինծու փաստերի հիման վրայ բարձրացրել գոռում՝— գոչին այն յետին մարով, որ ընթերցող հասարակութեան զգալ տան, թէ «Շաւիղը» ամբողջովին զբաղուած է ստութիւնների տպագրութեամբ, որպէսզի այդ «զրպարտութիւնների» շարքումը դասին նաև իրենց մասին տպածները մինչև այժմ»:

Ուրեմն մեր թշնամիները, կամենալով «Շաւիղի» վրայ մի կեղտ դնել, պատրաստել են մի այդպիսի գծուծ դաւ. և երբ մի անգամ «Շաւիղին» ստութեան մէջ ձգէին, դրանով յոյս ունէին որ իրենց կեղտերն էլ կը ծածկուէին: Բայց ոչինչ չը կայ որ չը յայտնուի. «Շաւիղը» եթէ իր անխղճմտանքա որ թղթակիցների մէկից կամ մի կեղտոտ անձից խաբ ելով ընկնի մի սխալի մէջ, այն ժամանակ կ'անի այն, ինչ որ ահա մենք անում ենք այժմ:

Մենք սկսեցինք մանրամասն քննութիւն, մեր գլխաւոր աշխատակիցն էլ անցնելով Կովկասից ուր այժմ վեհ. կաթուղիկոսին կողոպտելով է զբաղուած Սալմաստի այդ զզուելի տեսուչը—ստուգեց որ № 16 ի յօդուածը դարբնուած է մեր թերթի վարկը վնասելու համար և երբ միջոցներ ունեցանք աւելի խոր քննութեան մէջ մտնել, երևան հանեցինք այն փաստը որ այդ ստայօդ յօդուածը գրել է նոյն ինքն Տեսուչ Մ. Աւետիսեանը: Որովհետև գտանք տեսչի մի ձեռագիրը և համեմատեցինք № 16 յօդուածի ձեռագրի հետ: Նոյնն էին երկուսն էլ: Մ. անգամ ևս ելևան է գալիս ուրեմն Մ. Աւետիսեանի կեղտը:

Կողոպտել ժողովրդին, հարստահարել կ թակա՝ գործը և այդպիսի յրբաւ թեամբ վերաբերուել մասուլի հա՝ ընդունակ է միայն Մ. աւետիսեանը և իր շայկան, որ՝ է տա ինքերից ի վեր էլ աւազակութիւն չը մնաց որ չանէին Սալմաստի գաւառում:

Մենք յայտ բարում ենք որ № 16 «Շաւիղում» տպուած «Սալմաստ. տեսչի վանդալականութիւն» յօդուածը, ստայօդ և դրելէ նոյ՝ ի՝ քն այ՝ Մ. Աւետիսեան տեսուչը, որ իր այդ վերջի՝ ընթացքովն ապացուցեց թէ իրենից ներկայացուում է տպ՝ անութեան մի տիպ՝ր, որի վրայ պիտի թ՝ լ և ո՝ ը ցած է նոյն իսկ քննադատելուց: Քննադատում են փոքր՝ չատէ Վարդկութիւն ունեցող անձեր, ի կ Մ. Աւետիսեանների չ՝ ն ա ժանացնում այդպիսի պատուի անգամ:

Հ. Խ.

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

13 Յուլիս 95.

Ես չէի ուզել հրապարակ գալ, որովհետև իմ պաշտօնը թոյլ չէ տալիս որ կարողանամ ամէն ժամանակ ազգային գործի խառնուել: Բայց ձեր թղթակցից «Շաւղի» № № 20 և 21 համարներում Ռաշտի դպրոցների պակասութիւնը որ համառօտ գրած էր, այստեղ մեծ յուզում պատճառեց և ստիպեց ինձ, յանուն ճշմարտութեան հրապարակ գալ: Երբ առաջին հոդաբարձական ժողովը կազմեց որ այստեղի ուսուցչին և ուսուցչուհուն հեռացնեն, հոդաբարձուներից երկուսը կամք չունէին. նրանք ծածուկ պաշտպանում են այդ կրթութեան ապիկար պաշտօնեաներին, որովհետև իրենց տուած զատական պատուվը բաւարար էին և խոստացել են ուսուցչին, որ ինչպէս միշտ պաշտպանած են, էլի կը պաշտպանեն: Վերջին ժողովում պ. Ստուածատուր Տէր Օհանեանը չեկաւ, բայց պ. Աղաւել Յովսէփեանը առ երեսս էր միայն նախատում ուսուցչին: Երբ ժողովը վճռեց որ պէտք է ուսուցչին և ուսուցչուհուն նամակ գրել ահա պ. Ստուածատուրն ասաց—պ. Աղաւէլն առաջ թող ստորագրի, սա էլ նրան ասաց և գործը անկախ մնաց: Այդ միջոցին «Շաւիղը» հասաւ. ճարպիկ հոդաբարձուները (երկուսը ի հարկէ) կպչեցին թերթի յօդուածից և սկսեցին գոռալ թէ «ազգիս օրիորդաց պատուին պակասութիւն են գրել» ի հարկէ օրիորդաց միամիտ հայրերը գրգռուեցին և չը կարողանալով ըմբռնել որ յօդուածը հոդաբարձութիւնն է միայն խայտառակում ու ուսուցչին և վարժուհուն—մի ժամանակ զայրացան թերթի դէմ:

Ես ուզում եմ այդ խնդիրը պարզել ուստի և գրում եմ այս երկտողը:

Այստեղի հոդաբարձուները, պիտի իմանալ, որ ուրն են. Տ. Ղևոնդ քահանան—նախագահն է, յետոյ գալիս են պ. Տ. Բազիլբանկի տնօրէն, Ստուածատուր Տէր Օհանեան գործարանատէր Աղաւել Յովսէփեան—Թումանեանց գործակալ, Ա. Յորդանանեան—մանրավաճառ, Տ. Առաբելեան—չիրաչի և Ս. Ասլանեան—վաճառական: Սրանցից մի քանիսը, կարդալուց յետոյ «Շաւիղի յօդուածը, զգացին որ քարը իրենց գլխին էր խփվում և շտապեցին «Արձագանքում» հերքել «Շաւիղի» գրածը, այստեղ է որ նրանք աշխատում են կեղտոտել ուրիշի, որպէսզի իրանք մաք ելնեն:

Նրանք, օրինակ, ասում են որ պարսիկներ չեն եղել օրիորդաց դպրոցում իրը աշակերտներ: Ես հաստատում եմ որ մինչև իմ առ հոգաբարձութիւնը արած գանգատը, մի տարի ուկէս շարունակ, պարսիկ տղամարդիկ յաճախում էին օրիորդաց դպրոցը, ուսուցչի սենեակում, ուսուցչից դաս առնելու համար: Ես յայտնեցի հոդաբարձուներին թէ հինգ հոգի պարսիկ. ամէն օր, կէսօրից երկու ժամ անց գալիս են օրիորդաց դպրոց և մինչև արևմուտ մնում են այնտեղ իրը թէ ուսանելու են կարդում. այդ միջոցումն դպրոցի օրիորդները թրքական երգ ու պար էին առնում բակումը վարժուհու 14 տարեկան օրիորդի առաջնորդութեամբ, պարսիկներից մէկը դաս էր կարդում, իսկ միւսները լուսամուտից նայում էին և զմայլում թրքական երգովն ու պարովը: Ես պնդեցի հոդաբարձութեան, թէ որ օրէնքով մի երիտասարդ ամուրի ուսուցիչ, բնակվում է օրիորդաց դպրոցում. պ. Աղաւէլը ասաց որ ուսուցիչը պէտք է անպատճառ այնտեղ ոնակի, որ գիշերները իր քրոջ դաստայ, նրա միւս օրեայ օրիորդներին դաս տալիքը: Ես ծիծաղեցի, պ. Խաչատուր Թումանեանցն էլ ներկայ էր: Ես հարցի թէ ուրեմն այն վարժուհին որ պէտք է նոր բան սովորի և այն ուսուցիչը որ միայն մեծ մեծ խօսք գիտէ, ինչով են արժանաւոր. որ 800 ր. ռոճիկ են ստանում, այլ և բնակութիւն, վառելիք եւ ծառայ: Պ. Աղաւէլն ասաց, որ դրանից լաւն այստեղ չի գալ, որովհետև այստեղ զարճութիւն չը կայ: Ես պատասխանեցի թէ կարող է լինել որ գտնուեն աւելի լաւ և պատուաւոր ուսուցիչ և վարժուհի, որոնք մերոնցի նման զարճութեանց իրահար չը լինեն մենակ, այլ ի սէր գործի զոհեն իրենց քէֆը *): Ինձ ծողրեցին ասելով թէ «անդրջրհեղեղեան զանգի» տէր եմ:

Քիչ ժամանակից յետոյ տեսնում եմ որ պարոնները էլի շարունակում են գալ և երգերն ու պարերը նոյնպէս. մեր պատշգամից տեսնում էի այդ բոլորը. խոստովանվում եմ, Պարսկաստանի մէջ էի մեծացել. ճանաչում եմ մեր երկիրը և նրա բարքերը. տեսնում էի որ այդ բոլորի հետևանքը վատ պիտի լինէր, ուստի և նոր ց դիմեցի հոդաբարձութեան, նորից բողոքեցի. այն ժամանակ պ. Ստուածատուրն էլ առարկութիւն չը գտաւ այլ ասաց թէ մի քանի ամիս է մնացել արձակուրդներին, յետոյ կը հրաժարեցնենք ուսուցչին և ուսուցչուհուն. յետոյ էլ աւելացրեց թէ «լարող էք լաւը գտէք»: Էլ ճար չունէինք. մեր տղայոցը հանեցի դպրոցից և մինչև վերջը սկսեցի բողոքել ամէն տեղ ու պահանջել որ այդ խայտառակութիւնը վերացուի:

*) Յօդուածագիրը իրաւունք ունի. այդպիսի ազնիւ երիտասարդներ շատ կան Կովկասում: Խմբագրութիւնս յանձն է առնում 800 ռուբլի ռոճիկով, Ռաշտեցոց համար գտնել մի կանոնաւոր դպրոցից ուարտած, համեստ և աշխատաւոր ուսուցիչ և նոյն տեսակ ցէնզ ունեցող, մինչև իսկ կար ու ձև իմացող վարժուհի—այր և կին կամ քոյր ու եղբայր: Խարերայ է նա, ով կասէ թէ այդպիսիները գտնել չէ կարելի:

Ծան. Խմբ.

Երբ «Զաւղի» հարուածները հասան, մեր ճարպիկ վարժապետն ու վարժուհին զգացին որ ոտների տակի հողը շարժվում է. իսկոյն սխալ տեղեկացին թղթակցութեան միտքը, զբաղեցնելով մի քանի միամիտ կանայք, վախեցրին նրանց և կորզեցին մի քանի ստորագրութիւններ մի սուտ հերքման համար ու ուղարկեցին «Մշակին»: Երբ այդ հերքումը տպուեց (չը մոռանամ ասել որ շատ ստորագրութիւն չը գտնելով, մի քանիսներինն էլ իրենք գրեցին). երբ տպուեց, ստորագրութիւն ունեցող կանայք բարկացան որ առանց իրենց հաճութեան և խարելով կորզուել է ստորագրութիւնները, շտապեցին ներողութիւն խնդրել դրացի խանիցն ասելով թէ իրենք ոչինչ լուր չունեն այդ մասին, վարժապետն ինքն է առանց մեր գիտութեան ստորագրել: Սոքա են անուանք այն տիկինների, որոնք չը գիտեն թէ ով է իրենց անունը ստորագրել հերքման տակ: Տիկին Զմրուխտ Մ. Ասլավէրդեան, Իսկուհի Մելիք Ասլավէրտեան. Սօնա Յակովբեան: Իսկ «Ընձաղանքի»գրուածքից,որի տակը հոգաբարձուներ են ստորագրել, ոչինչ լուր չ'ունեն եղել մի քանի հոգաբարձուները և նախագահը:

Ահա այդպէս կազմուել են հերքումները՝ ստելու համար մի իրողութիւն:

Ձեր թղթակիցն էլ ասենք, սխալ է գրել. գինի օղիով պարսիկներին զարճացնելը ճիշտ չէ, թղթակիցը սխալ է լսել: Մի քանի տշակերաուհիներից վարժուհին գինի և օղի ուզել է, բայց ոչ թէ ուզղակի պարսից համար, այլ իրենց համար. ես դա մի քանի հոգիներից լսել եմ, որոնց մէկն էլ, պ. Կոստի Բունաթեանը, ասում էր որ վարժուհին ասել է իրենց աղջկան որ ութ շահի փող և մի չիշ օղի կամ գինի բերեն, որ գնան բաղը քէֆ անելու. պ. Կոստին փողը աւել է, իսկ օղիի համար ասել որ «մենք չիրաջի չենք» և չէ տուել: Վախենում եմ որ նամակիս երկարութիւնը ձեզ զլուցրեց. ես դեռ շատ ասելիքներ ունիմ վարժապետի և վարժուհու մասին. ես պիտի շարունակեմ դեռ գրել. թող ամաչեն (եթէ կարող են) որ դեռ այս տարի էլ են պահել այդ ապիկարներին: Հաստատ իմացէք, որ ժողովուրդը չէ կամենում նրանց, բայց հոգաբարձութեան մէջ կան մի քանի աղաներ, որոնք զանազան պատճառներով պաշտպանում են նրանց և խեղճ ժողովուրդը վախենում է ձայն հանի:

Օր. դպրոցին դրացի,
Սարգիսխան Դաւիթխանեանց

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵՂԵԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ. հատոր Ա. պատմական զրոյցներ. թարգմանեց ի պարսկերէնէ Միքայէլ Ա. Մարգարեան. Թէհրան. Տպարան Ա. Բէկնազարեանի. 1895 գինն է 30 շահի:

—

Ինչպէս որ կան մտաւորական հիւանդութիւններ, կան նաև գրականական, գիրք գրելու, իր անունը մի որևէ գրքի վրայ ցոյց տալու հիւանդութիւն: Բաւական է որ լինի մի գրուածք որի վրայ իր անունը փայլի. դա անմահութիւն է համարում հիւանդը: Էլ չէ նայում թէ որպիսի գիրք է իր գրածը կամ թարգմանածը. թէ արժէր նրան հրապարակ հանել, ընթերցողի ժամն ու փողը խլել և մեր աղքատ գրական ասպարէզը լեցնել ցանցառ և նոյն իսկ անբարոյականացնող գրուածքներով: Այդպիսի մի հիւանդ անշուշտ եղել է Միքայէլ Ա. Մարգարեանը, որ ձեռնարկել է թարգմանելու վերոյիշեալ վերնագրով գրոյց անեկդոտները և որոնց այժմ հրատարակում է նրա որդին, կամենալով անշուշտ իր հօր յիշատակը անմահացնել:

Գիրքը թարգմանած է պարսկերէն «Զէյնէթ-իլ-Մէջալիս» գործից, որպէս առում է թարգմանիչը՝ «ընտրանօք»: Սակայն բոլոր եղած անեկդոտներից մի քանիսը միայն ունին մի քիչ սրամտութիւն իսկ միւսները անպէտք և անհամ պատմութիւններ են, որոնք ոչ մի արժանիք չ'ունէին թարգմանելու:

Բայց թարգմանիչը ինքն էլ է խոստովանում այդ՝ ասելով. «որովհետև այս զարմալի (?) պատմութեանց հաւաքածոյն գրականական մի տարրի (?) չէր կազմում իւր մէջ (ինչ հայերէն), ուստի և ես զայն ընդ անուամբ «Արևելեան Զրոյցների»—anecdotes—այսու յետագայ ուղերձիս կը նուիրեմ ազգի այն պանդուխտ խմբին, որոյ մօտ կը հաւատամ անշուշտ մի աստիճան յարգ պիտի գտնէ նա իր սահմանափակ շրջանի մէջ»:

Ապա թարգմանիչը մի ուղերձ է նուիրում այն պարոններին, որոնք թարգմանչին հիւրասիրել են, նրա ճանապարհորդութեան ժամանակ—«հիմնելով անշուշտ ձեր դաղափարական համակրութիւնն իմ ժողովրդական այն համբաւոյն վրայ (sic), որ քսանամեայ անենդ (!!) և անտրիտուր (աւելորդ չէ՞ր այդ բառը) ծառայութիւններ միայն առ ազգն կարող են գոյացնել մի համայնութեան մտքում»: Որպիսի յաւակնոտ հոսսական խօսքեր միանձի կողմից, որի արած «աննենդ ու անտրիտուր ծառայութիւնների» արդիւնքներն է, որ այսօր վայելում է Թէհրանը Ց. Գառապարեանի և իւրայինների խաւար ու յետադէմ գործունէութեան շնորհիւ: Թարգմանիչն է այն նշանաւոր Միքայէլ Ա. Մարգարեանը, որ հիմնադիր է եղել Թէհրանի խաւարամիտ կուսակցութեան. այդ խմբի Պետրոս Սիմէոնեանցն է: Բայց թողնենք այդ. խնդիրը այն գրքի մասին է. որ ներկայանում է իբր անդրանիկ արդիւնք Թէհրանի տպարանի: Ոչ մի արժանիք չ'ունեցող այդ առակները գրէթէ չեն էլ զարդացվում, որովհետև թարգմանել են մի անճոռնի լեզուով: Այդ լեզուն մի խայտառակ խառնուրդ է Կ. Պոլսի և Ըրարատեան բարբառների, լիքը քերականական սխալներով, անհասկանալի, անհեթեթ ոճերով, դարձուածքներով: Ցիշեցնում է Եփրեմվերդու ծաղրելի լեզուն: Դեռ չեմ յիշում որ կէտադրութեան կանոնի մասին գրողը կամ սրբագրիչը ոչ մի գաղափար չեն ունեցել: Պարզ է որ թարգմանիչը ոչ պարսկերէնն է կանոնաւորապէս իմացել և ոչ էլ իր մայրենի լեզուն:

Գրքոյկը բովանդակում է 25 առակներ, որոնցից շատերը ուղղակի անբարոյականացուցիչ էլ են, որպիսին է վերջինը:

Գաղափար տալու համար թէ որպիսի առակներ են պատմվում այդ գրքի մէջ, տամ մի առակի բովանդակութիւնը: Հին Նիշաբուրում մի վաճառական մի օր փողոցում տեսնում է մի կարտուած հագուստով շատ սիրուն աղջիկ. խօսեցնում է և գնում է նրանց տուն, հօրիցը ուզելու համար աղջկայ ձեռքը: Տան մէջ նա դարմանալով տեսնում է սաստիկ չքեղութիւն և հարստութիւն և երբ այդ հակապատկերների երևոյթով հետաքրքրվում է, տանտէրը—մի շէյխ, հրաւիրում է նրան միւս օրը մզկիթ գալ՝ տեսնելու համար թէ ինչպէս՝ կարելի է հարստանալ: Մզկիթում, շէյխը մի քարոզ խօսելուց յետոյ, ժողովրդին է ցոյց տալիս մի քսակ ոսկի և ակնեղէն և ասում է որ գտել է. ով որ տէրն է, թող դայ ստանայ: Բոլորը հիացած են մնում շէյխի ազնուութեան վրայ և երբ շէյխը ուտելու յայտնում է որ ինքը ուտելու հաց չունի, ամէն կողմից նրա առջևն է թափվում արծաթէ դրամներ: Բայց գտնուած ոսկու քսակը տալիս է մի պառաւի որը յայտնում է թէ իրն էր ու կորցրած է եղել: Վաճառականը իսկոյն նկատում է որ պառաւը նոյն իսկ շէյխի կինն էր և «ազնիւ» շէյխը այդ ստոր խարդախութիւնն էր արել և հարստահարելով ազնիւ զգացմունքներն ու յատկութիւնները, յաջողել էր լաւ փող հաւաքել: Այնուհետև շէյխը վաճառականին էլ է խորհուրդ տալիս սուտ սնանկութիւն հրատարակել ու դրաղել իր արհեստով: Վաճառականը լսում է իր աներոջ, սնանկութիւն է հրատարակում, և «բարեկամք նորա արդի տխուր վիճակին վրայ ցաւելով»հաղթին փողեր են տալիս նրան: Վաճառականը տեսնելով որ այդպիսի խարդախութեամբ աւելի հեշտ է հարստանալ, ասում է. «ինչպէս կը թողնում այսպիսի արհեստն, երբէք»: Եւ այդ անբարոյական առակը վերջանում է սոյն խօսքերով «Կեցցես, մուրաղկանութիւն արա եթէ կուզես կարօտ չը մնալ»...

Ահա այդպիսի առակներ է, որ թարգմանել է Միքայէլ Ա. Մարգարեանը: Այդպիսի մի վնասակար գիրք հայ դրականութեան համար մի խորին անպատուութիւն կարող է բերել և իր թարգմանիչի բարոյական յատկութիւնների արտայայտիչը միայն համարուել: Տպագրութիւնը անպիտան է. սխալներով լիքը: Կէտադրութիւն չը կայ: Ափսոս այն փողը որ ծախսուել է այդ գրքոյկի տպագրութեան համար: Զատ շնորհակալ կը լինէր ազգը, եթէ թարգմանողի ժառանգը խնայէր մեզ՝ գրքի միւս հատորներիցը:

Բրիչ.
Կ. Կ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆՆ

—

Դավրէժ. 13 յուլիսի 95

Ընդարձակ շատ զարմացանք կարդալով Ձեր լրագրի 22-րդ թուում, մեր ընկերութեան մասին Դավրէժից մի սխալ և միանգամայն թշնամական ոգւով գրուած յօդուածը:

Վարչութիւնս երբէք իրաւունք չունի մեղադրել ձեզ, ի նկատի ունենալով որ դուք՝ ինչպէս և ամեն մի ազգային գործոց նախանձախընդիր մի մարդ, միշտ կաշխատէք ազգին կամ ընդհանուրին վերաբերեալ գործոց մէջ խարդախութիւն ու նենգութիւն անողներին հրապարակաւ խայտառակել, մատնացոյց անելով նրանց գէշ վարմունքն. բայց խիստ զարմանում ենք թէ ինչպէս այդ յօդուածագիրը իրեն թոյլ է տուել այդպիսի մի ահագին սուտ գրելու, քանի որ արդէն մի անգամ մեր ընկ. վերաբերեալ մի սխալ լուր գրեցաւ և մենք էլ պատասխանեցինք: Մեր ներկայացրած հաշուի ճշտութեան համար դարձեալ ներկայիս կը հաստատենք, և այդ հաշուին էլ երբոր տարեգլխին ընդհ. ժողով ունեցանք բոլոր անդամոց կողմէ ևս քննուեցաւ եթէ սխալ լինէր այն ժամանակ անդամներն կը բողոքէին, և ով որ հետաքրքիր է իմանալ նրանց իսկութիւնը կարող է դիմել վարչութեանս և քննել հաշիւներն. եթէ մենք գրած էինք թէ ընկ. անդամներից բացի ոչ ոք իրաւունք չունի իր ուղած ժամանակ հաշիւ պահանջել, դա շատ պարզ է որ միմիայն այս տարւայ հաշիւների համար էր և ոչ թէ անցեալների, որովհետև ընկերութիւններն պարտաւոր չեն այն հաշիւներն, որոնք դեռ տարին լրացած չլինելով չեն փակուած—ուրիշ մարդկանց ներկայացնել, իսկ նրանք որ փակուած վերջացած են և լրագրով էլ յայտարարուած, ինչ կերպ կարելի է ուրիշներից պահել. նախ՝ չէ՞ որ արդէն յայտարարուած է և երկրորդ որպէսզի երբ որևիցէ մէկն յայտարարուած հաշիւների մասին միտրևիցէ կասկած կամ նկատողութիւն ունենայ, կարողանայ պահանջել:

Ուստի յարգելի խմբագիր, ձեզ ծանձրացնելուս պատճառն սա է, որ բարեհաճիք վերստին վերականգնեցնել մեր ընկ. պատիւն հերքելով 22-րդ թուում գրուած յօդուածն, սորա համար մենք առ ի ապահովութիւն, դարձեալ կրկնում ենք որ հաշիւներն շատ ճիշտ են և ամեն պատասխանատուութիւն մեզ վրայ ենք առնում:

Ի դիմաց Դպրոց. Բար. ընկ. վարչութեան նախագահ

Վարդան Վարդանեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Եաւիզ» № 16-ում տպուած «Սալմաստի տեսչի վանդալականութիւն» յօդուածի կեղծ, դիտմամբ մեր թերթի վարկը ձգելու միտումով գրուած լինելը՝ հաղորդեցինք. այսօրուայ համարում պարզում ենք այդ հարցը, որին այլ ևս չենք վերադառնալու:

—

Ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում այս համարում տպւող Ռաշտի թղթակցութեան վրայ, որը և կը լինի վերջինը այդ խնդրի մասին: Մտադիր չենք այլ ևս մեր թերթը շատ զբաղեցնել այդ հարցով:

—

Հայկազեան դպրոցի համար ուսուցիչներ դեռ չը կան. երևի չեն էլ լինի, որովհետև նախօրօք եղած դիմումները սնյաջող են եղել: Ցաւալի է. ցանկալի էր որ հոգաբարձութեան անցեալ տարւայ սխալների շնորհիւ, դպրոցը փակ չը մնար և կամ թէ անճարութիւնից յանձնուէր զանազան պատահական տիրացուների:

—

Կիւրակէ, ամսիս 6-ին, քաղաքս ժամանեց Թերթիս գլխաւոր աշխատակիցը:

—

Ռաշտի մի աղա, Աստուածատուր Տէր Օհանեան անունով, ամսիս 3-ին 15 գինուած անձերի յանկարծական յարձակումով, լափշտակել է տուել մեր գլխաւոր աշխատակցին Փիրաբազարից Ռաշտ գալիս և տարել իր դործարանը, կամենալով նրանից ոյժով հերքման թուղթ առնել Ռաշտի խնդրի մասին: Բայց անյաջող է եղել իր յոյսերի մէջ: Հարկ ենդած տեղ դիմուած է, Աստուածատուր Տէր Օհանեանցի այդ վայրենութիւնը պատժել տալու համար, իսկ ինքը—մեր գլխաւոր աշխատակիցը կը նկարագրի իր հետ պատահած դէպքը, որ շատ բնաւորիչ է և միևնոյն ժամանակ կրբ-

թիչ։ Տէր Օհանեանցի այդ աւազակային վարմունքն իսկ բաւական է իր դատը կորցնել տալու և իրեն ցեխի հետհաւասարեցնելու համար։ Երևում է որ Տէր Օհանեանը նորից կարօտել է իրեն արժանի և մի քանի անգամ վայելած զնդանների ու բանդերի։

—

Մի զարմանալի լուր։ Խալֆա Յ. Դասպարեանը Էրզրումի առաջնորդից հրաւէր է ստացել Էրզրում գնալու, դպրոցների տեսչութեան պաշտօնով։ Էրզրումի առաջնորդ Ղևոնդ եպ. Շիշմանեանն ու իրեն շրջապատողները հէնց այդ քայլով ցոյց են տալիս թէ ինչ գլուխներ են. թէ չէ, ինչ է նշանակում Էրզրումի դպրոցները յանձնել կամենալ մի այնպիսի փտած խալֆայի, որին ուսուցչի անունն անգամ տալն ամօթ է։ Ասում են որ խալֆան մերժել է։ Պատճառը հասկանալի է, որովհետև հրաւէրի մէջ ասուած է որ տեսչին կ'օգնեն Սանասարեան դպրոցի վարժապետները բոլորը բարձր կրթութիւն ստացածներ։ Դասպարեանը վախենում է որ խայտառակի և բոբիկութիւնը երևան գայ։ Պատիւ չէ բերում Էրզրումցոց այդ հրաւէրը, քանի որ իրենց ունեցած Ղազարոս կամ Կարապետ պատուելիներից աւելի վատն է Դասպարեանը։

—

Լսում ենք որ Սպահանի փոխանորդ հայր Ծ. վ. Այվատեանը սկսել է քննել Ռաշտի ուսուցչի հարցը և մտադիր է շուտով անձամբ էլ Ռաշտ գնալ։ Հայր սուրբի ուշադրութիւնն էլ ենք հրաւիրում այս համարի մէջ տպւող Ռաշտի թղթակցութեան վրայ։

—

Դավրէժից մեզ գրում են որ Ալամեան դպրոցի տեսուչ Զիլինգիրեանը փաբւել է այս տարւայ համար ևս։ Ալամեան դպրոցի հոգաբարձուները դեռ չեն վճռել մի կտնոնաւոր ուսումնարան ունենալու և դրա համար էլ է որ ամէն հասնողի յանձնում են դպրոցը։ Առ հասարակ Ալամեան դպրոցը փայլում է իր մի քանի թերուս այնպիսի ուսուցիչներով էլ, որոնք տարրական դպրոցների ցէնզ իսկ չ'ունեն։

—

Նոյն տեղից մեզ գրում են որ Ալամեան և Լիլավա թաղի դպրոցների հոդաբարձութեան միացման պատճառով, գոյացել են այնպիսի հանգամանքներ, որոնք վնասում են Լիլավայ թաղի տէն տեսական դրութեանը։ Օրինակ հէնց այս տարի այդ դպրոցի վիճակախաղութիւնը շատ վատ է գնում և դպրոցը գրանով կարող է զրկուել 1000 թումանի մի արդիւնքից։

—

Մի ցաւալի լուր են բերում մեզ Կովկասի լրագիրները։ Թիֆլիզում վախճանուել է «Մշակի» հրատարակչուհի Տ. Մարիամ Աղամալեան, տիկին Արծրունին։ Նրա մահը մի կորուստ է, որովհետև Տիկինը օրինակելի աշխատող և մանաւանդ ջերմ սիրահար էր գրականութեան. տարիներից ի վեր նա գործում էր իր ամուսին Գրիգոր Արծրունու հետ և նրա գլխաւոր օգնականներից մէկն է եղել։ Տիկին Արծրունու մահուանից յետոյ, «Մշակի» հրատարակութեան իրաւունքը կոակով անցնում է պր. Ա. Արծրունուն։ Սակայն դեռ պարզ յայտնի չէ թէ ինչ հանգամանքներ կան և ինչ կը լինի «Մշակի» ապագան։ Թաւալ լ պր. Ա. Արծրունին կամենալ թողնել իր Եւրոպայում ունեցած գործերը և ղեկավարել «Մշակը». այնպէս որ «Մշակի» այժմեան դրութիւնը կը մնայ անփոփոխ, և այդ շատ հաւանական էլ է. որովհետև—ինչպէս լսում ենք—կտակի մէջ ասուած է որ Մշակի խմբագրութեան այժմեան անդամները պիտի նոյնը թողեն։ Ապագայն ցոյց կը տայ ամէն ինչ։ Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում Տիկին Գրիգոր Արծրունու մահուան համար։

—

Պարսկաստանի փոստային վարչութիւնը հրատարակել է նոր գներ նամակագրոշմների համար։ Այսուհետև արտասահման ուղարկելիք նամակներին փոխանակ 10 շահու, պիտի 12 շահու նամակագրոշ կպցնել. 10 մսխալ տպագրուած լրագիր կամ կապոց փոխանակ 2 շահու պիտի ունենայ 3 շ. Նամակագրոշմ. Պարսկաստանի քաղաքների համար թղթակցութեան գինը փոփոխութեան չէ ենթարկուել։

—

Փոխանորդ հօր կազմած Հայաստանի սովելոց օգնելու յանձնաժողովի գործը շատ յաջող է առաջ գնում. մեր կողմից մեր կատարեալ ուրախութիւնն ենք յայտնում և յորդորում միանգամայն որ ա ճապարէ ինչքան կարելի է շուտով այդ գործը գլուխ հանելու, մանաւանդ որ հասարակութիւնն էլ համակրութեամբ է վերաբերվում։ Մենք կարծում ենք որ հանգանակուած գումարները պէտք է ուղարկուեն ուղղակի Պոլսոյ պատրիարքին, ինչպէս և օտար պետութիւնները անում են իրանց դեսպանների ձեռքով։ Այս առիթով յայտնում ենք որ ուրիշ քաղաքից այդ հանգանակութեան մասնակցել կամեցողները, իրենց նէրները կարող են ուղարկել ուղղակի Թէհրան, մասնաժողովի գանձապահ Եղբարք Թումանեանցներին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիզի հայ. գրքերի Հրատար. ընկերութիւնը սկսել է տպագրել և շուտով լոյս կ'ընծայէ Շէքսպիրի «Ինչպէս կամենաք» գործի հայերէն թարգմանութիւնը, որ արել է Յովհաննէս խան Մասեհեանը։ Այդ պարոնի «Համլէտ» թարգմանութիւնը այնքան յաջող է ելաւ, որ հայկական գրականութեան մէջ մի նոր երևոյթ կարելի է համարել։ Սպասում ենք «Ինչպէս կամենաք» գործին և յոյս ունենք որ պ. Մասեհեանը քաջալերելով այն ընդունելութիւնից որ գտնում են իր թարգմանութիւնները, ժամանակի ընթացքում կը տայ մեզ Շէքսպիրի գործերի ամբողջ թարգմանութիւնը։

—

Ստացել ենք «Մշակից» արտատպուած Ս. Քալանթարի «Սասուն» անունով գրքոյկը Սասունի քարտէզով կից. արժէ 25 շահի. դիմել խմբագրութեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԷՊՍԻՔՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կովկասից հասնող լուրերը հաղորդում են որ լուրջ շարժումներ են տեղի ունեցել Եդեռ շարունակվում են Զէյթունում։ Նոյն տեսակ խռովութիւններ տեղի են ունեցել Մարզուանում էլ։

—Կ. Պոլսի հայոց պատրիարքը կարդալուց է արել այն եպիսկոպոսներին, որոնք ասել էր կաթուղիկոսին հակառակելու միտումով, ձեռնարկել էին զանազան կեղտոտ միջոցների դիմել։ Իզմիրեան պատրիարքի այդ արածը նոր ժանի է համակրութեան։

—Պաստեորին և անգլիացի մեծ փիլիսոփայ Հերբերտ Սպենսերին առաջարկել է գրնուսական«Երժանիք» անուանած պատուանշանը, բայց երկու մեծ գիտնականներն էլ մերժել են ընդունել։ Այդ մերժումի վրայ շատ են խօսում գերմանական թերթերը։

—Մատագասկարին սկսում են տիրապետել Ֆրանսիացիները. նոր հեռագիրները հաղորդում են որ Մէցաթանանա քաղաքը գրաւած է արդէն։

—Կ. Պոլսի թերթերը շարունակում են տպել անդադար հետևալը. «պնշտօնական զեկուցում. Վանից, Ցրապիզոնից հայլն հայլն կը հեռագրեն որ շնորհիւ վեհափառ Սուլթանի, հանրային անդորրութիւնը պրդոկող ոչ դէպք պատահած չէ»...

—Սուլթանը հրամայել է բանդերից արձակել այն հարիւրաւոր հայերի, որոնք «քաղաքական յանցաւոր» անունով ստանջվում էին տարիներից ի վեր։ Շեն արձակել մեծ յանցաւորները, օրինակ Սասունի Հերոս Մուրադը և այլն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Սոֆիա. Օգոս. 13. (Ն. տ.) Իշխան Ֆէրդինանդը այսօր վերադարձաւ Բուլգարիա։

Լոնդոն. օգոս. 15. Պարլամենտը բացուեցաւ արքունական հրամանով. թագուհին իր գահական ճառի մէջ կարդաց, որ «կանցլէրը յայտնում է որ տեղեկութիւններ է ստացել ուրիշ կառավարութիւններից և այդ տեղեկութիւնները վստահացնում են որ նրանք կը շարունակեն մեզ հետ ի ենց բարեկամութիւնը։ Ոչ մի կնճռոտ գործ չէ պատահել որևիցէ անկիւնում որ կարողանար Եւրոպայի խաղաղութիւնը վտանգի ենթարկել։ Յոյս կայ որ Չին—Ճապոնական խաղաղութեան դաշինքները մշտական կը լինեն. խիստ չէզոքութիւն է պահած այդ պատերազմի ժամանակ։ Ես խորին ցաւակցութիւն եմ յայտնում նաև այն բարբարոսութիւնների համար որոնք կատարուել են Անգլիայի միսիոնարների վերաբերութեամբ։ Չինացիք խիստ միջոցներ են ձեռք առել։ Խօսելով Հայաստանի դէպքերի մասին, թագուհին ասաց որ խիստ սարսափ էն ազդել իրեն և ամբողջ քրիստոնեայ ազգերի, մանաւանդ անգլիացիների զայրոյթը շարժել։ Նորին Վեհափառութիւնը անձկանօք սպասում է Սուլթանի որոշմանը բարենորոգութիւնների նկատմամբ, որի ծրագիրը յանձնուել է Անգլ. Ֆրանս. և Ռուսաց դեսպանների ձեռքով։ Բ. Դիան։

Լոնդոն. օգոս. 15. Իր պատասխան թագուհու գահական ճառին Սալիսբիւրին ասաց. որ թիւրքայ Սուլթանը յանցաւոր կը լինի և մեծ սխալ կը գործի, եթէ յանձն չառնի օգնել կառավարութիւնների ջանքերին՝ վերջացնելու համար այն անշխանակաւ գրութիւնն ու անիրաւութիւնները, որոնք տիրում են Հայաստանում։

Լոնդոն. օգոս. 16. Սալիսբիւրին իր ճառի մէջ յայտնեց նաև որ եթէ չինական կառավարութիւնը չի պատժել միսիոնարներին սպանողներին, անգլ. կառավարութիւնը ստիպուած կը լինի խիստ միջոցներ ձեռք առնել։

Լոնդոն. օգոս, 17. «Times»-ը Սալիսբիւրիի ասած խօսքերը Հայաստանի կատամամբ, ընդունում է որպէս միխիստ ազդարարութիւն ուղղուած Սուլթանին. եթէ ըէֆորմներ չը մտցնեին Հայաստանում, ասում է նա. այն ժամանակ կառավարութիւնների համար այլ ևս անկարելի կը լինի երաշխաւորել տաճկաց գոյութիւնը։

Լոնդոն օգոս. 18. Այն յանձնախումբը որ գնացել է Կու—ջանգ (Չինաստան) քննելու համար Միսիոնարներին սպանելու գործը՝ տեղ է հասել. տեղի են ունեցել մի քանի կարևոր ձերբակալութիւններ։

„ՇԱՒԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Մարաղա. Ճիրօղլի. Յօդուածը կը տպի, ձեզ հարկաւոր է քիչ համբերել. սպասեցէք ձեր հերթին։ Շարունակեցէք։

Դավրէժ. Ռ. Մովսէսեան. Ձեր գրուածքները վաղուց ետ են ուղարկուած. միթէ չէք ստացել։ Ոչ մէկը չի տպւիլ։

Ըրատարակիչ—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԳՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԻՆՉ ՄՕՏ
Թիֆլիզի Հայոց Հր. ընկերութեան
ԳՐՔԵՐԸ
Յանկացողներին ուղարկվում է գրքերի ցուցակը։
Դրամի փոխարէն կարելի է ուղարկել և փոստի մարկաներ։
Դիմել՝ Alexandre Ossépian, Resch՝
1—5

ՍԱՍՈՒՆ

Աշխարհագրական քարտէզով
կազմեց
Ը. ՔԱԼԱՆԹԱՐ
(Արտատպած »Մշակի» լրագրից)
Գինն է 20 կոպ. (25 շահի)
Դիմել՝ «Շաւղի» խմբագրութեան.
1—3